Funded by
the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Հայաստանում ՌԷԳ-ի գործնական կիրառման վերաբերյալ ուսումնական սեմինար 2
# (գնահատում, հետեւանքների մեղմացում, ՌԷԳ արդյունքների արձանագրում, մոնիթորինգ եւ ՌԷԳ-ի տեխնիկական առաջադրանքի մշակում)

## Օրակարգ

**23 - 24 նոյեմբերի 2023 թ.**

1- Ին օր՝ 10.00 – 17.20
2- րդ օր՝ 09.30 – 13.40

**«DoubleTree by Hilton Yerevan City Centre» հյուրանոց, «Milano» սրահ**
**Գրիգոր Լուսավորչի փող., 4/2**
**Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան**

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

**Հայաստանում ՌԷԳ-ի գործնական կիրառման վերաբերյալ ուսումնական սեմինար 2 (գնահատում, հետեւանքների մեղմացում, ՌԷԳ արդյունքների արձանագրում, մոնիթորինգ եւ ՌԷԳ-ի տեխնիկական առաջադրանքի մշակում)**

**23-24 նոյեմբերի 2023 թ.**
**«DoubleTree by Hilton Yerevan City Centre» հյուրանոց**

## Ընդհանուր տեղեկություններ

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ), ի դեմս «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի (Էսպոյի կոնվենցիա) և ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության (ՌԷԳ արձանագրություն) քարտուղարության, տրամադրում է տեխնիկական խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերում Հայաստանին ՌԷԳ արձանագրության համաձայն ռազմավարական էկոլոգիական գնահատման համակարգի (ՌԷԳ) զարգացման գործում: Աջակցությունը ներառում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի» (EU4Environment) ծրագրի (2019 - 2024թթ.) շրջանակներում ՌԷԳ-ի վերաբերյալ երկու ուսումնական սեմինարների անցկացումը:

**2-ին ուսումնական սեմինարն** անցկացվում է 2023 թվականի հոկտեմբերի 30-31-ը կայացած 1-ին ուսումնական սեմինարի հիման վրա և ուղղված է շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացմանն ու կարողությունների զարգացմանը ՌԷԳ-ի այնպիսի առանցքային տարրերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ ռազմավարական և նպատակային վերլուծությունը, հետևանքների գնահատումը, հետևանքների մեղմացման միջոցառումների և մշտադիտարկման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, ՌԷԳ-ի հաշվետվությունների որակի ստուգումը, ռազմավարական պլանավորման փաստաթղթում և դրա հաստատման վերաբերյալ որոշումներ կայացնելիս ՌԷԳ-ի առաջարկությունների ներառումը: Սեմինարը կազմակերպում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) հետ համագործակցությամբ՝ ՌԷԳ-ի հարցերով ՄԱԿ-ի ԵՏՀ միջազգային և ազգային խորհրդատուների աջակցությամբ:

## Ուսումնական սեմինարի նպատակները, ակնկալվող արդյունքները եւ վերջնարդյունքները

- Հայաստանում շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում ՌԷԳ-ում կիրառվող վերլուծական մոտեցումների, մեղմացման միջոցառումների և մշտադիտարկման վերաբերյալ առաջարկությունների մշակման, ՌԷԳ հաշվետվությունների որակի ստուգման, ռազմավարական պլանավորման փաստաթղթում և որոշումներ կայացնելիս ՌԷԳ-ի առաջարկությունների ներառման, ինչպես նաև ՌԷԳ-ի իրականացման տեխնիկական առաջադրանքի մշակման ժամանակ անհրաժեշտ հարցերի ներառման վերաբերյալ.
- ՌԷԳ գործընթացի հետ կապված Հայաստանում ոլորտային պլանավորման մարմինների, որոշումներ կայացնողների, տեղական ինքնակառավարման

մարմինների և այլ շահագրգիռ կողմերի իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում՝ համաձայն.

- ՌԷԳ-ի վերաբերյալ փոփոխված ազգային օրենսդրության,
- «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի (Էսպոյի կոնվենցիա) ՌԷԳ արձանագրության և ՌԷԳ-ի վերաբերյալ ԵՄ-ի թիվ 2001/42/EC դիրեկտիվի:

- գործնական վարժությունների միջոցով զարգացնել ուսումնական սեմինարի մասնակիցների՝ ՌԷԳ գործընթացում որակի գնահատում և վերլուծություն իրականացնելու կարողությունները:

### Մասնակիցներ

Սեմինարին կմասնակցի ոլորտային նախարարությունների, շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների, առողջապահության նախարարության, տարածքային պլանավորման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության թվով մինչև 35 ներկայացուցիչ:

### Գործնական տեղեկատվություն

Սեմինարի աշխատանքային լեզուներն են լինելու հայերենը և ռուսերենը՝ համաժամանակյա թարգմանության ապահովմամբ:

### «EU4Environment»-ի («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի») մասին

«Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի» (EU4Environment – Green Economy) ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և բարձրացնել բնակչության էկոլոգիական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներին, ցուցադրելով և բացելով ավելի «կանաչ» աճի հնարավորություններ, ինչպես նաև ստեղծելով բնապահպանական ռիսկերի և շրջակա միջավայրի վրա ազդեցության առավել արդյունավետ կառավարման մեխանիզմներ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում հինգ գործընկեր կազմակերպությունների կողմից՝ ՏՀԶԿ, ՄԱԿ ԵՏՀ, ՄԱՇՄԾ, ՄԱԿ ԱԶԿ և Համաշխարհային բանկ, 2019-2024թթ. ընթացքում, բյուջեն կազմում է 20 մլն. եվրո:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել EU4Environment@oecd.org:

Առավել մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ մեր կայքում՝ www.eu4environment.org.

ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից իրականցվող ՌԷԳ և Անդրսահմանային ՇՄԱԳ գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել հետևյալ հասցեով՝ leonid.kalashnyk@un.org

## ՕՐԱԿԱՐԳ

**ՕՐ 1. 23-ը նոյեմբերի**

| Ժամ | Անվանում |
|---|---|
| **9:30 - 10:00** | **Մասնակիցների գրանցում** |
| **10:00 - 10:15** | **Ուսումնական սեմինարի բացում եւ մասնակիցների ողջունում**<br>*Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչ (անունը ճշտվում է)* |
| **10:15 - 10:25** | **Սեմինարի նպատակների եւ օրակարգի ներկայացում**<br>*Դր. Մայա Գաչեչալիձե-Բոժեսկու, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ՌԷԳ հարցերով միջազգային խորհրդատու* |
| **10:25 - 10:35** | **Մասնակիցների ներկայացում եւ նրանց ակնկալիքների հստակեցում**<br>*ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ՌԷԳ հարցերով ազգային խորհրդատու՝ տկն. Ազգանուշ Դռնոյանի և դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկուի գլխավորությամբ* |
| **10:35 - 11:15** | **Վերլուծություններ ՌԷԳ-ի շրջանակներում. ռազմավարական վերլուծություն, նպատակային վերլուծություն, հետեւանքների գնահատում, այլընտրանքային տարբերակների վերհանում եւ ուսումնասիրում. մաս I**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **11:15 - 11:30** | **Սուրճի ընդմիջում** |
| **11:30 - 12:20** | **Վարժություն 1. Ռազմավարական վերլուծություն եւ նպատակային վերլուծություն ՌԷԳ-ի շրջանակներում՝ Հայաստանում թափոնների կառավարման պլանի ՌԷԳ-ի օրինակի հիման վրա**<br>○ առաջադրանքի պարզաբանում<br>○ աշխատանք զույգերով/խմբերով<br>○ արդյունքների ներկայացում<br>*Խորհրդատվություն՝ դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու և տկն. Ազգանուշ Դռնոյան* |
| **12:20 - 13:10** | **Վերլուծություններ ՌԷԳ-ի շրջանակներում. ռազմավարական վերլուծություն, նպատակային վերլուծություն, հետեւանքների գնահատում, այլընտրանքային տարբերակների վերհանում եւ ուսումնասիրում. մաս II**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **13:10 - 14:00** | **Վարժություն 2. Հնարավո՞ր է արդյոք ընդլայնել հետեւանքների գնահատման աղյուսակը**<br>○ առաջադրանքի պարզաբանում<br>○ աշխատանք խմբով<br>○ արդյունքների ներկայացում<br>*Խորհրդատվություն՝ դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու և տկն. Ազգանուշ Դռնոյան* |
| **14:00 - 15:00** | **Ճաշի ընդմիջում** |
| **15:00 - 15:50** | **ՌԷԳ գործընթացում հետեւանքների մեղմացում**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **15:50 - 16:05** | **Սուրճի ընդմիջում** |
| **16:05 - 17:00** | **Մոնիթորինգ ՌԷԳ գործընթացում**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **17:00 - 17:20** | **Արդյունքների ամփոփում եւ 2-րդ օրվա օրակարգի ներկայացում** |

**ՕՐ 2. 24-ը նոյեմբերի**

| Ժամ | Անվանում |
|---|---|
| **9:30 - 10:00** | **Առաջին օրվա ամփոփում. Մասնակիցների արձագանքները եւ երկրորդ օրվանից նրանց ակնկալիքները**<br>*Դասընթացավարներ՝ տկն. Ազգանուշ Դոնոյան և դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու* |
| **10:00 - 10:20** | **ՌԷԳ հաշվետվության պատրաստում. Ազգային պահանջներ**<br>*տկն. Ազգանուշ Դոնոյան*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **10:20 - 10:50** | **ՌԷԳ-ի վերաբերյալ զեկույցի պատրաստում. ՌԷԳ-ի վերաբերյալ արձանագրություն եւ առաջատար փորձը**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **10:50 - 11:20** | **Որակի վերահսկում/որակի ապահովում ՌԷԳ գործընթացում**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **11:20 - 11:40** | **Սուրճի ընդմիջում** |
| **11:40 - 12:10** | **ՌԷԳ հաշվետվության պետական բնապահպանական փորձաքննություն. ազգային պահանջներ**<br>*տկն. Ազգանուշ Դոնոյան*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **11:30 - 12:20** | **Վարժություն 3. ՌԷԳ գործընթացում որակի գնահատման չափանիշների կիրառումը**<br>○ առաջադրանքի պարզաբանում<br>○ աշխատանք զույգերով/խմբերով<br>○ արդյունքների ներկայացում<br>*Խորհրդատվություն՝ դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու և տկն. Ազգանուշ Դոնոյան* |
| **12:20 - 12:50** | **ՌԷԳ արդյունքների ներառումը պլանավորման փաստաթղթերում եւ դրանց հետ կապված համապատասխան որոշումների կայացման գործընթացներում. ազգային եւ միջազգային պահանջներն ու փորձը**<br>*տկն. Ազգանուշ Դոնոյան*<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **12:50 - 13:20** | **Ի՞նչ պետք է հաշվի առնեն պլանավորման մարմինները ՌԷԳ-ի իրականացման համար տեխնիկական առաջադրանք կազմելիս. գործնական նկատառումներ**<br>*Դր. Մայա Գաչեչիլաձե-Բոժեսկու*<br>*Ներկայացում և քննարկում* |
| **13:20 - 13:40** | **Եզրափակիչ դիտողություններ, մասնակիցների արձագանքները եւ սեմինարի փակում** |
| **13:40 - 14:40** | **Ճաշի ընդմիջում** |